ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 341-Ա

09 հունիսի 2026 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՎԱՐԴԵՆԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով

որոշում եմ՝

1.«Վարդենիկի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի փոփոխության պատճառով «Վարդենիկի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ապրանքանյութական արժեքների հանձնում-ընդունումը սահմանված կարգով կազմակերպելու համար ստեղծել հանձնաժողով ՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովի նախագահ Արմեն Առաքելյանին՝ ապրանքանյութական արժեքների հանձնման-ընդունման աշխատանքներին ընդգրկել նաև «Վարդենիկի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության պատասխանատու անձանց և համապատասխան ակտերը հինգ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ:

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

ք. Գավառ

Հավելված
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2026 թվականի հունիսի 9 -ի
N 341-Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՎԱՐԴԵՆԻԿԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ԱՊՐԱՆՔԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Արմեն Առաքելյան	- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի նախագահ)
Լիանա Մակվեցյան	- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի պարտականությունները կատարող
Դավիթ Սահակյան	- Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ
Նաիրի Մելոյան	- հանձնող
Հասմիկ Գաբրիելյան	- ընդունող
Սոս Սարգսյան	- հաշվապահ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ